

2. Հովուանոցի եկեղեցւոյն պատմական ծագումը .

Բեթղհէմի արևելեան կողմը կը գտնուի Պէյթ-Սահուր փոքրիկ գիւղը, որ է ըստ Ս. Գրոց Բերութեամբ «հանդէպ Բեթղահէմի» (Երեւ. ԽԱ. 17). այս գիւղին սահմանին մէջ է «Հովուաց դաշտը», ուր շինուած է «Հովուանոց»ը (արաբ. Տէյր էր-Ռաւաթ) և հո՛ս էր որ հրեշտակները հովիւներուն աւետեցին Յիսուսի ծնունդը: Մարինոս լատին պատմիչը կը վկայէ թէ շատ հին ժամանակներէն, այս տեղւոյն վրայ շինուած էր փառաւոր եկեղեցի մը Ս. Հեղինէ թագուհիին կողմէն, երկարութիւնը 46 թզաչափ, իսկ լայնութիւնը՝ 25, և նուիրուած էր Ս. Հրեշտակապետաց: Ըստ վկայութեան Նիկեփորոսի, այս եկեղեցւոյ մէջ կը գտնուին երեք հովուաց գերեզմանները, ինչպէս 670ին տեսած է Արգուլֆ եպիսկոպոս, իր ուխտաւորութեան առթիւ: Մարինոս դիտել կու տայ թէ այս նուիրական տեղը կը յարգեն ո՛չ միայն քրիստոնեաները, այլ նաև մահմետականները կանթեղ կը վառեն, խունկ կը ծխեն, և լատին կրօնաւորք Մենդեան ձրագալուցին «Փառք ի բարձունս» կ'երգէին:

Ե. դարուն, Կիւրեղ Սկիւթուպոլսեցին՝ իր «Մար-Սապայի» կենսագրութեան մէջ շահեկան տեղեկութիւններ կու տայ Հովուանոցի եկեղեցւոյն հիմնարկութեան և այլ պարագայից նկատմամբ. յիշեալին տուած տեղեկութեան համաձայն, արքա Մարկիանոս, որ հակառակորդ մը եղած է Քաղկեդոնի Ժողովին եւ վանական էր Երուսաղէմի Ս. Բեսսարիոնի վանքին, Եւդոկիա թագուհիին նիւթական օժանդակութեամբ, 454ին, Բեթղհէմի արևելեան հիւսիսային կողմը, կը հիմնէ «Հովուանոցի եկեղեցին»: Սկիւթուպոլսեցիէն զատ, միարևակ Զաքարիա հետտորի Եկեղ. Պատմութիւնը և Նախասեստրիսիֆ Մրոց (Plérophorie) գործը, Կանտի Anecdota Syriaca աշխատութիւնը կը պատմեն Մարկիանոս վանականին հակաքաղկեդոնական գործերը, որոնց համաձայն կը հասկցուի թէ Մարկիանոս միանալով իր զաղափարակից Ռոմանոս վանականին հետ ջանացած է քաղկեդոնիկ Յորնաղի տեղ 451ին Երուսաղէմի աթոռը բարձրացնել Թէոզորոս վանականը և համոզած է Երուսաղէմի Մարտիրոս եպիսկոպոսը ընդունելու (484ին) Զենոնի հրովարտակը: Այս վերջին տեղեկութիւնը կը հերքէ Սկիւթուպոլսեցիին այն հաւաստիքը թէ՛ Մարկիանոս